ԿԱՐՄԵՂՈՍ ՍԱՐԻ ՎՐԱ

3 ԹԱԳ. 18:17-39

ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

כַּרְמֶל -Carmel, Կարմեղոս = "garden-land"

1. a mountain on the Mediterranean coast of northern Israel, just below Haifa a town in the mountains on the west side of the Dead Sea and south of Hebron

- «**Քերիթ**» բառը նշանակում է «կտրել-հեռացնել»:
- «**Սարափաթ**» բառը առաջացել է «հնոց» բառից:
- **Աբդիան/Obadiah** - Աստծո ծառա servant of Jehovah
- **Elijah** - My God is Jehovah - Եհովան իմ Աստվածն է
- **հնազանդվել - ὑπακούω** (verb) գործողություն, to listen (Հուփաքուո) - 21 անգամ, Ն.Կ: **Առաջին անգամ ՆԿ-ում** – *Մատ. 8:27 - Իսկ մարդիկը զարմացան եւ ասում էին, Սա ինչպիսի՞ մէկն է՝ որ քամիները եւ ծովն էլ հնազանդում են սորան:*
- **Գնալ Բառը (verb) գործողություն** - 81 անգամ Մատ. 5:24 - Թո՛ղ այնտեղ քո ընծան սեղանի առաջին. եւ **ԳՆԱ** առաջ հաշտուիր քո եղբօր հետ. եւ հետոյ եկ ընծադ մատուցրու:

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(3 Թագ. 18:16-48)

1 Որոշ ժամանակ անցնելուց հետո, երրորդ տարում, Եղիային հասաւ Տիրոջ խօսքը, որն ասում էր.
«Գնա՛ ու երեւացի՛ր Աքաաբին, իսկ ես անձրեւ կը տեղացնեմ երկրի վրայ»: 2 Եղիան գնաց Աքաաբին
ներկայանալու, իսկ Սամարիայում սաստիկ սով էր:

17 Եւ հէնց որ Աքաաբը Եղիային տեսաւ, իսկոյն ասեց Աքաաբը նորան. **Սա դո՞ւ ես, ով Իսրայէլի
խանգարողը:** 18 Եւ նա ասեց. Ես չեմ խանգարել Իսրայէլին, այլ դու եւ քո հօր տունը, որ թողելով
Տիրոջ պատուէրները գնում ես Բահաղների ետեւից: 19 Եւ հիմա մարդ ուղարկիր հավաքիր բոլոր
Իսրայէլին ինձ մօտ Կարմեղոս սարի վերա. Եւ Բահաղի չորս հարիւր հիսուն մարգարէներին, եւ
Աստարովթի չորս հարիւր մարգարէներին, որ **ուտում են Հեզաբէլի սեղանից:** 20 Եւ Աքաաբը մարդ
ուղարկեց Իսրայէլի բոլոր որդիներին եւ հավաքեց մարգարէներին **Կարմեղոս սարի վերա:**

Գործը ընդեմ շնորքի

25 Եւ Եղիան ասեց Բահաղի մարգարէներին. Ընտրեցէք ձեզ համար մէկ զուարակը, և սկիզբը
դուք արէք. Որովհետև դուք շատ էք, և կանչեցէք ձեր աստուծոյ անունը, բայց կրակ մի դնէք:

26 Եւ նորանք առան իրանց տրուած զուարակը և արին և կանչեցին Բահաղի անունը
առաւօտից մինչև կէսօր ասելով. Ով Բահաղ, պատասխան տուր մեզ. Բայց ոչ ձայն կար, ոչ
պատասխանող. Եւ ոստոստում էին իրանց շինած սեղանի մօտ: 27 Եւ կէսօր էր դառել, և Եղիան
նորանց ծաղր անելով ասեց. Բարձր ձայնով կանչեցէք. Որովհետև նա աստուած է, գուցէ խոր
մտածութեան մէջ է, կամ զբաղուած է, և կամ ճանապարհորդութիւն է անում, գուցէ նա քնած է
և զարթնանայ: 28 Եւ նորանք բարձր ձայնով կանչեցին, և իրանց օրէնքի պէս, * կտրտում էին
իրանց մարմինները սուրերով և գեղարդներով, մինչև որ արիւնը թափվում էր նորանց վերայից:
29 Եւ երբոր կէսօրն անցաւ, նորանք դեռ մարգարէանում էին մինչև երեկոյեան * զոհի
ժամանակը, բայց ոչ ձայն կար, ոչ պատասխան տուող և ոչ լսող:

I. ԵՂԻԱՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

1 Կոր. 14:3 - Իսկ մարգարէացողը, մարդկանց հետ շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն է խօսում:

21 Եւ Եղիան մօտեցաւ բոլոր ժողովրդին եւ ասեց. ***Մինչեւ ե՞րբ պիտի դուք կաղաք երկու կողմի վերա.*** *Եթէ Եհովան է Աստուածը, նորա ետեւից գնացէք, եւ եթէ Բահաղն է, նորա ետեւից գնացէք.* ***Եւ ժողովուրդը նորան մի բան պատասխան չտուաւ:*** *22 Եւ Եղիան ասեց ժողովրդին. Մինակ ես եմ մնացել Եհովայի մարգարէ. Իսկ Բահաղի մարգարէները չորս հարիւր հիսուն մարդ են: 23 Արդ թող մեզ* ***երկու զուարակ*** *տան. Եւ նորանք իրանց համար ընտրեն մէկ զուարակը, նորան կտորեն եւ դնեն փայտերի վերայ, բայց կրակ չդնեն. Եւ ես էլ անեմ միւս զուարակը եւ դնեմ փայտերի վերայ, եւ կրակ չդնեմ: 24 Հետոյ դուք կանչեցէք* ***ձեր աստուծո*** *անունը, իսկ ես կկանչեմ Եհովայի անունը. Եւ կլինի՝ այն աստուածը, որ կրակով պատասխան կտայ, նա է Աստուածը.* ***Եւ բոլոր ժողովուրդը պատասխանեց՝ եւ ասեցին. Լաւ խօսք է:*** ***Նա չդատապարտեց այլ նորոգեց:***

II. ԵՂԻԱՆ ՆՈՐՈԳԵՑ ՏԻՐՈՋ ՍԵՂԱՆԸ:

1 Կոր. 14:3 - Իսկ մարգարէացողը, մարդկանց հետ շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն է խօսում:

30 Այն ժամանակ Եղիան ասեց բոլոր ժողովրդին. Ինձ մօտ եկէք. Եւ բոլոր ժողովուրդն եկաւ նորա մօտ, եւ ***նա նորոգեց Տիրոջ սեղանը, որ քանդուած էր:*** *31 Եւ Եղիան վեր առաւ* ***տասնեւերկու քարեր*** *Յակոբի որդկանց թիւի չափ, որ Տիրոջ խօսքը եղաւ նորան թէ Իսրայէլ լինի քո անունը: 32 Եւ այն քարերից մի սեղան շինեց Տիրոջ անունով, եւ սեղանի շուրջը մէկ փոս շինեց, որ երկու գրիւ սերմ կառնէր: 33 Եւ փայտերը շարեց եւ կտորեց զուարակը եւ դրաւ փայտերի վերայ. 34 Եւ ասեց. Չորս սափոր ջուր լցրէք եւ ածեցէք ողջակէզի եւ փայտերի վերա. Եւ ասեց. Կրկին արէք. Եւ կրկին արին. Եւ ասեց.* ***Երրորդ*** *անգամ արէք. Եւ* ***երրորդ*** *անգամ արին: 35 Եւ ջուրերը գնում էին սեղանի շուրջովը, եւ փոսն էլ լցուեցաւ ջրով:*

- ***Նա հավաքեց ցրվածը և միաբանեց բաժանվածը***

  1. ***Ռուբէն***
  2. ***Շմավոն***
  3. ***Ղեվի***

4. ***Հուդա***
5. ***Զաբուղոնը***
6. ***Իսաքարը***
7. ***Դանը***
8. ***Գադը***
9. ***Ասերի***
10. ***Նեփթաղիմը***
11. ***Հովսէփը***
12. ***Բենիամինը***

- ***Դուք էլ կենդանի քարերի պէս շինուեցէք հոգեւոր տաճար... 1 Պետրոս 2:5***

III. ԵՂԻԱՆ ԲԱՐԵԽՈՍԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ:

1 Կոր. 14:3 - Իսկ մարգարէացողը, մարդկանց հետ շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն է խօսում:

*36 Եւ **երեկոյան զոհի ժամանակն էր,** երբոր Եղիա մարգարէն մօտեցաւ եւ ասեց. Ով Եհովայ՝ Աբրահամի, Իսահակի եւ Իսրայէլի Աստուած. թող այսօր իմացուի, որ դու ես Աստուած Իսրայէլի մէջ, եւ ես **քո ծառան եմ,** եւ թէ ես **քո խօսքովն եմ արել** այս բոլոր բաները: 37 Պատասխան տուր ինձ, ով Տէր, պատասխան տուր ինձ որ այս ժողովուրդն իմանայ, որ դու Եհովադ ես Աստուած. **Եւ դու ետ կդարձնես նորանց սիրտերը:** 38 Եւ Եհովայի կրակը վայր իջաւ եւ կերաւ ողջակէզը եւ փայտերը եւ քարերը եւ հողը, եւ փոսի միջի ջուրն էլ լափեց: 39 Եւ բոլոր ժողովուրդը տեսաւ եւ վայր ընկան իրանց երեսների վերայ եւ ասեցին. **Եհովան է Աստուած, Եհովան է Աստուած:***

ԱՄՓՈՓՈՒՄ

I. ԵՂԻԱՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

II. ԵՂԻԱՆ ՆՈՐՈԳԵՑ ՏԻՐՈՋ ՍԵՂԱՆԸ:

III. ԵՂԻԱՆ ԲԱՐԵԽՈՍԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ:

*41 Եւ Եղիան ասեց Աքաաբին. Վեր գնա կեր ու խմիր. **Որովհետեւ անձրեվի սաստիկ ձայն կա:** 42 Եւ Աքաաբը վեր գնաց ուտելու եւ խմելու. Բայց Եղիան վեր ելավ կարմեղոսի գլուխը, եւ ծռուեցաւ մինչև գետինը եւ երեսը դրաւ իր ծունկերի մէջտեղը...*